

239

Թիւ 24472  
Փետրուար 20, 1975

Բարեշնորհ

Դանիէլ Սոկ. Քոչաքեան  
Հոգեւոր Մատակարար Ա. Փրկիչ Եկեղեցւոյ  
Նախազան ծխական Խորհուրդի  
Աւագ, Մասս.

Սիրելի Դանիէլ Սարկաւագ,

Ստացած ենք Փետրուար 13, 1975 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը  
հաղորդէք թէ ձեր նախազանութեամբ Յունուար 29ին գումարուած համայնքին  
ծխական ժողովին մէջ կատարուած է ծխական Խորհուրդի հինգ անդամոց ընտ-  
րութիւնը, եւ ներկայացնելով քուէարկպւթեան արդիւնքը՝ կը խնդրէք  
ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ ձեր ծխական ժողովը տեղի ունեցած է Թեմական  
Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք ծխա-  
կան Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Համեմատեած փութով Առաջնորդարան դրկել ծխական Խորհուրդի նորընտիր  
Դիւանի անդամոց անունները, հասցէնները եւ հեռածայնի թիւերը:

Օր հնելով ծխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք մեզի եւ Ձեր  
պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի  
պայծառութիւն Ա. Եկեղեցւոյն ի հոգեւոր շինութիւն համայնքի մեր  
սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՁԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Ճործ Սկրտիչեան  
Ահարոն Յովհաննէսեան  
Ճործ Աւագեան  
Ժրէնսիս Նամարեան  
Լութֆիկ -Ճէրի- Ատեփանեան